Հաստատեմ զժամանակաւոր
Հրահանգս Թեմական ժողովոց
եւ տամ ի գործադրութիւն

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8-ն ապրիլի 1917 թ.
Ս. էջմիածին.

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՀՐԱՀԱՆԳ

Ա. ԿԱԶՄԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

§ 1. *Թեմական ժողովը կազմւում է թեմից ընտրուած պատգամաւորներից։*

§ 2. *Թեմական պատգամաւորներին ընտրում են չորս տարի ժամանակով։ Հին պատգամաւորների լիազօրութիւնը շարունակւում է մինչև նոր պատգամաւորների ընտրութիւնը և պաշտօնի ձեռնարկելը։*

§ 3. *Թեմական պատգամաւորների լիազօրութեան քառամեայ ժամանակամիջոցը լրանալուց երեք ամիս առաջ թեմի առաջնորդը, իբրև նախագահ Թեմական խորհրդի սրա համախորհուրդ որոշմամբ շրջաբերական է ուղարկում պատգամաւորական նոր ընտրութիւններ կատարելու։*

§ 4. *Թեմական պատգամաւորի ընտրութեան մասնակցում են հոգևորական և աշխարհական երկու սեռի 21 տարեկանից վեր անձինք։*

§ 5. *Թեմական պատգամաւոր կարող են լինել հոգևորական և աշխարհական երկու սեռի 25 տարին լրացրած անձինք։*

§ 6. *Թեմական պատգամաւորի ընտրութիւնը կատա-*

բում է այսպէս՝ ա.—իւրաքանչիւր 5000 շունչը ընտրում է մի պատգամաւոր և մի անձնափոխանորդ։

Ծանօթ.—5000-ից աւելի ունեցող համայնքները ընտրում են երկրորդ պատգամաւոր, երբ 2500-ից պակաս չեն։

բ.—Եթէ համայնքները մանր են և ցրուած ընտրութիւնը լինում է երկաստիճան. իւրաքանչիւր 200 շունչը ընտրում է մի պատուիրակ, իսկ պատուիրակներն ընտրում են մի պատգամաւոր։

Ծանօթ.—Այն համայնքները, որոնց թիւը 200-ի չի հասնում, բայց 100-ից աւելի է, տալիս են նոյնպէս մի պատուիրակ։

§ 7. Պատգամաւոր կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից։

§ 8. Բոլոր տեսակի ժողովները իրաւական են, երբ ներկայ են իրաւասուների կիսից աւելին։ Եթէ առաջին ժողովը չկայացաւ, երկրորդ ժողովը իրաւական է անկախ ներկայ եղողների քանակից։

§ 9. Իւրաքանչիւր ժողովական ունի միայն մի ձայն։ Ժողովին ներկայ չեղող պատուիրակը կամ պատգամաւորը իւր ձայնն իրաւունք չունի ուրիշին յանձնելու։

§ 10. Բոլոր խնդիրները վճռում և ընտրութիւնները կատարւում են ձայների բացարձակ մեծամասնութեամբ։

Ծանօթ.—Եթէ ժողովականներից մէկը պահանջէ, որոշումները և ընտրութիւնները պէտք է լինին գաղտնի քուէարկութեամբ։

§ 11. Պատգամաւորների, և պատուիրակների ընտրութեան վերաբերեալ բողոքները քննում և լուծում է թեմական առաջնորդը՝ թեմական խորհրդի հետ կամ միայնակ, երբ թեմական խորհուրդ չկայ։

§ 12. Իւրաքանչիւր պատուիրակ և պատգամաւոր պէտք է ունենայ իրեն ընտրող ժողովի նախագահից և

քարտուղարից վաւերացուած մի վկայական իւր լիազօրութիւնը հաստատող։ Առանց այդպիսի վկայականի նա չի կարող օգտուել պատգամաւորի ձայնից։

§ 13. Պատուիրակներ և պատգամաւորներ ընտրելիս ժողովները զակավարուում են ծխական կանոնադրութեամբ. բացացութեամբ 5 և 14-րդ յօդուածների։ (Տես § 4 և 8 սոյն հրահանգի)

Բ. ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

§ 14. Թեմական ժողովները լինում են՝ պարբերական և արտակարգ։ Պարբերական ժողովները տեղի են ունենում տարեն մի անգամ, առաջնորդի հրաւէրով, իսկ արտակարգները՝ երբ ցանկանում է Վեհափառ Հայրապետը, թեմական առաջնորդը, թեմական խորհուրդը կամ պատգամաւորների $^{4}/_{5}$-ը։ Առաջնորդը, նախապէս խորհրդակցելով թեմական խորհրդի հետ, կազմում է ժողովի գրաղման խնդիրները, որի մասին տեղեկագրում է Վեհափառ Կաթուղիկոսին և առնուազն մէկ ամիս առաջ, յատուկ տպագրուած թերթերով, յայտնում է պատգամաւորներին։

§ 15. Պատգամաւորական ժողովի նախագահն է թեմի առաջնորդը, իսկ նիստերը կառավարելու համար ժողովը ընտրում է՝ ատենապետ, օգնականներ և քարտուղարներ։

§ 16. Թեմական խորհրդի և թեմական դպրոցի հոգաբարձութեան ներկայացուցիչները, թեմական դպրոցի տեսուչը և թեմական տեսուչները, եթէ պատգամաւոր չեն ընտրուած, ներկայ են լինում թեմական ժողովին իրենց պաշտօնին վերաբերեալ գործերի մասին հարկաւոր տեղեկութիւնները տալու։

§ 17. Թեմական պատգամաւորական ժողովի գրաղման առարկաներն են՝

ա.—Քննում և վաւերացնում է պատգամաւորների լիազօրութիւնը.

բ.—Ժողովի օրակարգի վրայ կարող է աւելացնել նոր հարցեր.

գ.—Ընտրում է՝ թեմական առաջնորդ, (յօդ. 18), թեմական խորհրդի անդամներ, թեմական դպրոցի հոգաբարձուներ, թեմական վերատեսուչ յանձնաժողովի անդամներ, որոնց բոլորին էլ ներկայացնում է Վեհափառ Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

դ.—Մշակում է թեմական դպրանոցի, եկեղեցական դպրոցների, եկեղեցիների կալուածների շահագործման եղանակը և յատուկ տեղեկագրով ներկայացնում է Վեհափառ Կաթուղիկոսին։

Մանօր. Թեմի մէջ գտնուած կալուածները կառավարում է էջմիածնի Կենդրոնական Խորհուրդը, որի անդամներն ընտրուում են թեմերի պատգամաւորական ժողովների կողմից։

ե.—Զբաղուում է քահանաների և ուսուցիչների տընտեսական ապահովութեան խնդրով։

զ.—Քննում և հաստատում է թեմական դպրանոցի, ծխական դպրոցների, եկեղեցիների նախահաշիւները, հաշիւները, տեղեկագրերը գեկուցումները և ուղարկում է կենդրոնական իշխանութեան ի տեղեկութիւն։

է.—Քննում է թեմական առաջնորդի, առաջնորդական փոխանորդների դէմ ծագած բողոքները և իւր եզրակացութիւններով ու արձանագրութիւններով ներկայացնում է Վեհափառ Կաթուղիկոսին ի տնօրէնութիւն։

ը.—Քննում է թեմական դպրանոցի հոգաբարձութեան, տեսչի և թեմական տեսուչների դէմ ծագած բողոքները և վճիռ կայացնում.

Մանօր. Թեմական ժողովի վճռի դէմ կարող են բողոքել Կենտրոնական Իշխանութեան։

§ 18. Թեմական Առաջնորդի ընտրու թիւնը կատարուում է թեմական պատգամաւորների ձայների մեծամասնութեամբ։

Թեմական առաջնորդ ընտրելիս թեմական ժողովը կազմում է չորս ընտրելիների ցանկ, առաջուց ստանալով ընտրելիների հաճութիւնը և հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին, որն իւր կողմից կարող է թողնել առաջարկուած ընտրելիներից ոչ պակաս քան երկու հոգու, որոնցից մէկին թեմական պատգամաւորները կարող են ընտրել առաջնորդ։ Ընտրութեան արձանագրութիւնը, ստորագրուած ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան կողմից, ներկայացնում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

§ 19. Թեմական ժողովը իւր արձանագրութիւններն ու զեկուցումները ներկայացնում է Վեհափառ Կաթուղիկոսին առաջնորդի կամ նրա պաշտօնակատարի միջոցով։ Առաջնորդը պարտաւոր է թեմական ժողովի այդ թղթերը մի եօթնեակում ուղարկել Վեհափառ Կաթուղիկոսին, տեղեկացնելով այդ մասին թեմական ժողովի ատենապետին։

Գ. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

§ 20. Թեմական խորհուրդն է թեմական պատգամաւորական ժողովի գործադիր մարմինը և ընտրւում է պատգամաւորական ժողովից չորս տարի ժամանակով։

§ 21. Թեմական խորհուրդը կազմուած է թեմի բոլոր փոխանորդներից և վեց անդամից և երեք անձնափոխանորդից։ Անդամներն ու անձնափոխանորդները կարող են ընտրուել հոգևոր և աշխարհիկ դասից։

§ 22. Թեմական խորհրդի նախագահն է թեմի առաջնորդը կամ նորան փոխարինողը։

§ 23. Թեմական խորհրդի կազմի կէսը փոխւում է երկու տարին մի անգամ։

Ծանօթ. Առաջին անգամ վիճակով։

§ 24. Թեմական խորհուրդը՝

ա.—Հաստատում է ծխական դպրոցների հոգաբարձուներին, աւագ-ուսուցիչներին և ուսուցիչներին։

բ.—Հակում է Ծխական դպրոցների տնտեսական-ուսումնական գործառնութեան վերայ։

գ.—Քննում և տնօրինում է դպրոցական մարմինների և պաշտօնեաների մէջ ծագած տարաձայնութիւններն ու բողոքները, ինչպէս և դրանց դէմ եղած բողոքները։

դ.—Նշանակում է թեմական տեսուչներ, թեմի կարիքի համեմատ, որոշում է սրանց ռոճիկը, հակում է գործառնութեան վերայ, քննում է զեկուցումներն ու տեղեկագրերը։

§ 25. Թեմական խորհուրդը պարտաւոր է իւրաքանչիւր տարի ներկայացնել թեմական ժողովին տեղեկագիր թեմի դպրոցական—տնտեսական դրութեան և իւր գործառնութեան մասին։

§ 26. Սոյն Հրահանգը իրաւական ոյժ ունի մինչև Ազգային եկեղեցական ժողովի նոր կանոնադրութեան սահմանելը։